# ՀՀ Մանկության դատարանի 27.02.2023թ. թիվ ՄՆԴ/0217/04/23 վճռով սնանկ ճանաչված «Լուսակերտ» ՍՊԸ-ի անշարժ գույքերի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-29 14:06:39

| | |
|---|---|
| Հայտատու | Ֆիզիկական անձինք |
| Տեսակ | Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ |
| Հիմք | Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված |

09.10.2026թ.-ին, ժամը 13:00-ին, նշանակված ՀՀ Սնանկության դատարանի 27.02.2023թ. թիվ ՍՆԴ/0217/04/23 վճռով սնանկ ճանաչված «Լուսակերտ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող և չգրավադրված անշարժ գույքերի բաց աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով:
27.11.2026թ.-ին, ժամը 13:00-ին, ՀՀ Սնանկության դատարանի 27.02.2023թ. թիվ ՍՆԴ/0217/04/23 վճռով սնանկ ճանաչված «Լուսակերտ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արտակ Պետրոսյանի կողմից, հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 19.07.2024թ. որոշումը, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 65ա հասցեում /8-րդ հարկ, 805 սենյակ/ կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 27.02.2023թ. թիվ ՍՆԴ/0217/04/23 վճռով սնանկ ճանաչված «Լուսակերտ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող չգրավադրված անշարժ գույքերի բաց աճուրդը:
Աճուրդի ներկայացված թիվ 1 լոտից թիվ 8 լոտերի մեկնարկային արժեքները, համաձայն «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի ՝ 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանի 36-րդ կետի, նվազեցվել են նախորդ աճուրդի մեկնարկային արժեքներից 5 /հինգ/ տոկոսի չափով և համապատասխանաբար կազմում են.
Լոտ 1-ից լոտ 8 - «Լուսակերտ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նոր Գեղի հասցեում գտնվող թվով 8 /ութ/ միավոր անշարժ գույքեր /վարելահողեր/-մեկնարկային ընդհանուր արժեքը կազմում 6.861.060 (վեց միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար վաթսուն) ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր լոտի մեկնարկային արժեքը և այլ մանրամասն տեղեկությունները ներկայացված են սույն հայտարարությանը կից ներկայացված աղյուսակում:
Անշարժ գույքերի գնորդը /գնորդները/ կատարելու է գույքի ձևակերպման, գրանցման հետ կապված ծախսերը:
Գույքի աճուրդը կանցկացվի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային

սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի ՝ 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանի համաձայն: Աճուրդի ներկայացված թիվ 1 լոտից թիվ 8 լոտերի, մեկնարկային արժեքները և այլ մանրամասն տեղեկությունները, ինչպես նաև աճուրդին մասնակցելու կարգը և մնացած պայմաններն ու մանրամասները նշված են կից ներկայացված հայտարարության մեջ

Աճուրդ Լուսակերտ 27.11.2026թ.pdf

37477191076

artakvarpet@mail.ru

ԿՈՏԱՅՔ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 6 ԹՂՄ., 16, 23